

ՀՐԱՆՏ ՄԱԹԻՈՍԵԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՆԱԽԱՓՈՐՁԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՄԱՆ ՓՈՐՁ

ՎԱԶԱԳԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՄՈՒՏՔ

Ստեղծագործական ճանապարհի սկզբին անգամ Հրանտ Մաթէոսեանն իր գրականութեամբ հակադրուում էր գրական աւանդական ընթացքին: Նա առաջադրում էր գեղարուեստական անկեղծութեան նոր աստիճան, որի յաղթահարումը տեւական ժամանակ էր պահանջելու: Բայց գրական նախափորձերը, եթէ չունէին մաթէոսեանական ջղուտ խօսքի մակարդակը, բայց եւ այնպէս յստակօրէն ուրուագծում էին մեծ ճանապարհի սկիզբը՝ անվարան ու վստահ:

Ինչպէս ժամանակի եւրոպական, այնպէս էլ խորհրդային գրողներին առջեւ ծառացած էր աշխարհում սեփական տեղն ու դերը, սեփական հայեացքի ուղղութիւնը ճշտելու հարցը:

Երկրորդ Համաշխարհային Պատերազմն իր հետեւանքներով պարզապէս աղէտալի եղաւ եւրոպական երկրներին, մասնաւորապէս Խորհրդային Միութեան համար: Դարերի ընթացքում ձեւաւորուած, կայացած ազգարնակչութիւնը ոչնչացուեց. գրողներն ու պատմաբանները փառաբանեցին իրենց առաջնորդների ռազմական հանճարը, իսկ իրականում անասելի գրկանքներն ուսերին տարաւ ժողովուրդը:

Պատերազմի անմիջական ներկայութիւնը թիկունքում, անգոր գրկանքների ու երբեք չփոխաւորուցուող կորուստների վարքագրութիւնն ամրագրուած են հայ գրականութեան մէջ ոչ միայն Մաթէոսեանի խօսքով:

Այդուհանդերձ Համաշխարհային շափեր ընդունած արհաւիրքը չդարձաւ մաթէոսեանական խօսքի առանցքը. նրա հայեացքի լայնութիւնը չէր սահմանափակուի այդ նիւթով: Դա ընդամէնը մարդկային գոյակցութեան ճանապարհի, եթէ ոչ սովորական, ապա անցողիկ երեւոյթ էր: Մարդն էլի գտնելու էր ինքն իրեն, շարունակելու էր ապրել եւ քաղաքակրթութիւնը գտնելու էր իր զարգացման ընթացքը:

Մաթէոսեանի համար առաւել կարեւոր էր տարբեր քաղաքակրթութիւնների բախումը: Եւ դա ոչ այնքան Արեւմուտք-Արեւելք հակասութեան բախում է, թէեւ հիմքում հակասութիւնը հենց զրան է վերաբերում, այլ աւանդական, դարաւոր կենսաձեւի եւ տեխնիկական քաղաքակրթութիւնների բախում: «...Հեռանում է առանձնաշատուկ, ձեռքի աշխատանքի կուլտուրան, որ քաղաքացիական փորձի կուտակում ու զագաթնակէտ էր դարձել»: Գուցէեւ սկզբում առաջընթացը մարդուն թուացել է շատ կարեւոր մի բան, քաղաքայինութեան ահադնացող թափը իրեն է ձգել շատերին. քաղաքում չկայ «դժուար հաց» վաստակելու անհրաժեշտութիւն, այլ՝ կեանքը թեթեւ ու հանգիստ ապրելու հրաւէր: Բայց գրողի հեռահար հայեացքում

այս ամէնէն ստանում է իրական իմաստաւորում - կտրուում են մարդու եւ Տիեզերքի, մարդու եւ մարդկանց միջեւ ձգուող բնական կապերը: Այստեղ ամբողջ ուժով վեր է յառնում մաթէոսեանական գրական ամենակարեւոր որակը՝ պատասխանատուութեան անփոխարինելի որակը: Գրողական պատասխանատուութիւնն ուղղակի վերածնունդ է գրող եւ գրականութիւն կապը: Իւրաքանչիւր պահի ոչ թէ ներկայութեան պատրանքը, այլ ներկայութիւնն ինքնին ստեղծում է ամէնօրեայ ճիգերի, մաքառման ընթացք:

Եթէ «Թումանեանի ժամանակներում չի եղել ոչ մի սանտիմետր չնշակուած, երկրային դրախտի չվերածուած հող եւ որտեղ հիմա չկան նոյնիսկ վայրի ընկուզենիները,- ես իմ գրողական ու որդիական պարտքը հասկանում եմ այսպէս. Լօռին (եւ իբրեւ աշխարհագրական հասկացութիւն, եւ իբրեւ հոգեբարոյական աշխարհ) չափտի երկրի երեսից անհետանայ...»¹: Սա իրապէս դաւանանք է: Մաթէոսեանի գրականութիւնը խորքում ծառայում է այս նպատակին: Կտրուում են դարերով ու դարերի փորձով ամրագրուած կապերը, որոնք մարդուն պահում էին իր բնական վիճակում: Քաղաքակրթութեան որոտընդոստ քայլերի տակ սմբում, այնուհետեւ ոչնչանում է մարդու աւանդական կենսաձեւը: Քաղաքակրթութիւնը մտնում է աշխարհի ամենախուլ անկիւնները, որպէսզի սովորեցնի ինչպէս ապրել եւ ինչ անել: Մարդկանց միջեւ եղած բնական յարաբերութիւնները փոխարինում են քաղաքականութեամբ, գաղափարական հարկադրանքով, չարութեամբ, սեփական կարծիքը պարտադրելու, իշխելու անզուսպ մարմաջով:

Խօսելով Սարգիսի մասին՝ Մաթէոսեանն առանձնացնում է նրա՝ թշնամի ու թշնամութիւն չճանաչող փիլիսոփայի հայեացքի ուղղութիւնը. «Թշնամի ունէր, եւ այդ թշնամին էր մարդկանց ճակատագրերի տնօրինման նորին մեծութիւն յաւակնոտութիւնը կամ որ նոյնն է՝ մարդկանց կեանքը իրնով փոխարինող կեղծիքը, նման կեղծիք ծնող գործիչներն ու մշակույթներն էին նրա թշնամին...»²:

Մաթէոսեանի գրականութիւնը՝ որպէս մարդկային աւանդական կեցութեան ոգու ամբողջական արտայայտութիւն, իր բովանդակութեամբ հակադրուում էր ժամանակի այն պարտադրանքին, որի հարուածների տակ աղարտուում էր մարդը, նրա հոգեւոր սկիզբը, կենսաձեւը, մարդու ազատ աշխատանքը, որ դառնում է ինքնօտարման գլխաւոր նախապայմանը:

Հայ գրականութեան մէջ ամրագրուած այս կարեւոր խնդիրը Բակունցի գրականութեամբ անմիջականօրէն առնչուում է Մաթէոսեանի ստեղծագործութեան ներքին հնչողութեան: Խօսելով իր մեծ նախորդի Սեւ Յեղբոր Սեւմաշեանը ժողովածուի լաւագոյն պատմութեան ժողովրդի մէկի «Պրովինցիայի Մայրամուտը»ի մասին՝ նա այն համարում է մեր ժամանակի մեծագոյն գործը՝ որպէս «մարդու» իր երկրից օտարման դասական օրինակ: «Քաղաքակրթութեան անունով եկան, արեւելեան քո կաւէ դղեակը, որ էիր դու, փլեցին, քեզ քո երկրից դուրս բռնեցին... Այսօրուայ իմ վիճակն է»³: Բացայայտօրէն խնդրել էր կարող գրողին անտարբեր թողնել: Իսկ այստեղից պարզապէս մի քայլ է մինչեւ մարդ-անհատի, նրա բարոյական աշ-

խարհի պաշտպանութեան խնդիրը: Այնքան ակնյայտ էին Մաթէոսեանի համար իր նահապետների կապած տապանի՝ մարդկութեան ու մարդկայնութեան դարաւոր կացարանի քայքայման հետեւանքները: Թէեւ նա սկզբից եւեթ մարդու մէջ չի բացառում վատը, բայց աստիճանաբար նրա հայեացքն ստիպուած է կանգ առնել ոչ այնքան այն մարդկանց վրայ, ովքեր ձգտում են բարիին եւ իրենց ուսերին են պահում երկիրը, որքան նրանց՝ ովքեր իրենց հասարկութեամբ, անմարդկային վարմունքով, դաժանութեամբ դրսեւորում են այնպիսի բնազդներ, որոնք կործանման նախապայմաններ են թէ՛ երկրի, թէ՛ մարդկային հոգեւոր աշխարհի համար: Փոխում է եւ շարադրանքի ոճը: Քնարական պատկերները, որոնք առաւելապէս արտայայտում են բնապատկերների, անցեալի վերյուշի, հերոսների ապրումների միջոցով, իրենց տեղը գիջում են որոշակի խնդիրների, այստեղ պատկերները փոխարինւում են զաղափարների համադրումներով:

Մաթէոսեանի հոգսը դառնում է ժամանակակից մարդը՝ իր հոգեւոր աշխարհով, դարերի ընթացքում ձեւաւորուած բարոյական որակների ու կանոնների ամբողջութեամբ: Եւ նրա մղումը՝ «Մարդկանց յիշողութիւնը եթէ յանկարծ խաթարուէր՝ ազգականներիս ու երկրացիներիս այն օրերի վարքից կարող էի նորից ժողովել մարդկային բարոյականութեան օրէնսգիրքը», իրականում մարդկային խաթարուած յիշողութիւնն առողջացնելն է: Իհարկէ, նրա համար ցաւալի է, որ գրողի խօսքն ընդհանրապէս չեն լսում կամ դժուարութեամբ են լսում, բայց նա վերջնական առումով անփոխարինելի է համարում մշակոյթի, գրականութեան դերը՝ հասարակական կեանքի, մարդկութեան զոյակցութեան կարգաբերման ընթացքում: Եթէ հասարակութիւնը ենթարկւում է մեծ ու փոքր աղէտների, ապա այդ ամէնի սկիզբը եղել եւ մնում է մշակոյթը. «Մշակոյթի պատասխանատւութիւնը աշխարհի ճակատագրի մէջ վիթխարի է»⁶:

Բայց վիթխարի է եւ մաթէոսեանական խօսքի պատասխանատւութիւնը իւրաքանչիւր մարդու ճակատագրի, նրա խողաղ երթի հանդէպ:

Մաթէոսեանի գրականութեան ենթիմաստը նպատակ ունէր ասելիքը համազուգակցել բարոյափոխութեան եզրայանգումների: Եզրայանգումներ, որոնք հնարաւորութիւն կ'ընձեռէին մարդուն բարոյապէս ու ոգեպէս դիմակայելու այն հանգամանքներին, որոնք անհատին ուղղակիորէն զրկում են մարդկային որակներից:

Մաթէոսեանն իր հարցազրոյցներում յիշում է եւ խորհրդային ժամանակների գրականագիտական հսկայի՝ ռուս քննադատ Միխայիլ Բախտինի անունը, եւ դա բոլորովին էլ պատահական չէ: Վերջինիս ամբողջ ստեղծագործութիւնը՝ թէ՛ փոխտոփայական, թէ՛ գրականագիտական, պատասխանն էր կեցութեան բանական իմաստաւորման այն ճգնաժամի, որն իր յայտ էր եկել նոր ժամանակներում: «Կարճ, այդ ճգնաժամի էութիւնը կարելի է այսպէս արտայայտել. մարդու դուրս մղումն այն աշխարհից, որն ստեղծել է կեցութեան ռացիոնալիստական տեսութիւնը, իսկ այստեղից էլ եւ կեցութեան իմաստի, դրա ամբողջականութեան կորուստը»⁷:

Մաթէոսեանական ստեղծագործութիւնն իր գերակշիռ մասով նպատակաւորուած է «քնական մարդու» իրաւունքների պաշտպանութեանը եւ այս առումով միանգամայն համահունչ է բախտինեան այս կարեւոր եզրայանգմանը՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով։ Պաշտպանել մարդավարի ապրելու իրաւունքը՝ նշանակում է մեծագոյն պատասխանատուութիւն զգալ մարդու եւ ընդհանրապէս մարդկութեան ճակատագրի առջեւ։ «Խօսքը տիեզերական առեղծուածի բանալին է. ահա ինչու առաջարկուած բանաձեւն «գրականութիւն» քաղաղիչը ինձ ներկայացնում է որպէս մեծագոյն պատասխանատուութիւն մարդկութեան առաջ»⁸։

Մաթէոսեանը եւ տեսական եւ գրական ոլորտում աւելին քան մէկ ուրիշը զգում էր գրականութեան կարգաբերող նշանակութիւնը, քանի որ մշակոյթը երկիր է ստեղծում, ստեղծում է ժողովուրդ։ Գրողի համոզմամբ, եթէ որեւէ երկիր պատերազմ է սանձազերծում, ապա անկասկած այդ երկրի մշակոյթը եւս մեղսակից է դառնում մարդու քայքայման գործընթացին։ Պատասխանատուութեան այս բեռով էլ Մաթէոսեանը մտնում էր գրականութիւն՝ ապահովելով իր բացառիկ ու անկրկնելի տեղը եւ գրականութեան, եւ կեանքի մէջ՝ որպէս քաղաքացի եւ մտաւորական։

ԳՐԱԿԱՆ ՆԱԽԱՓՈՐԶԵՐ

Մաթէոսեանի գրական նախափորձերը, որոնք հեղինակը չի կարեւորում, իրականում դառնում էին մեծ ճանապարհ դուրս բերող սկիզբ։ Դրանք, թերեւս կարեւոր էին ոչ այնքան մատուցման ձեւով, որքան ասելովով՝ բնագրից վերացարկուող գաղափարով։ Այս պարագայում դրանք դառնում են գրողի ստեղծագործութեան՝ որպէս ամբողջական մարմնի անբաժանելի մասը։

«Աւանդական» եւ «գիտութեան նուաճումներով» զինուած նոր գրականութեան միջեւ եղած բախումը առանձին ղէպքերում, բաւականին ուշացումով, որոշակի տեսք էր ստանում եւ հայ գրականութեան մէջ։ «Այսպէս Կոշուած Գիւղագրութեան Մասին» յօդուածում⁹, Մաթէոսեանը բանավիճելով Վարդգէս Պետրոսեանի հետ, իրականում պաշտպանում էր ճշմարիտ գրականութեան իրաւունքը եւ ղէմ էր այն սխեմաներին, որոնք իբր պիտի ստեղծէին նոր գրականութիւն։ «Իսկ եթէ գրող չես, ապա գումարի, բաժանիք բոլոր ֆիզիկոսներին, հովիւներին ու հանքափորներին, քանորդում ստացիր քաններորդ դարի հայ իրականութեան երկրորդ կէտը ճշգրտօրէն արտացոլող մի ֆիզիկոս-հովիւ, բայց դա չի լինի մարդ, այլ կը լինի գումարում, բաժանում եւ քանորդի պատասխան»¹⁰։

Թէեւ այս յօդուածում Մաթէոսեանը խօսում էր լիարին գրականութեան մասին եւ համոզուած էր, որ պարզապէս արհեստական է գիւղագրութիւն-քաղաքագրութիւն բաժանումը, իրականում նրա անհանգստութիւնը կապուած էր աւելի ընդհանուր եւ կարեւոր խնդրի։ Նա ղէմ էր քաղաքակրթութեան այն ընդհանրական բնոյթ կրող յարձակմանը, որ աղարտում էր մարդուն, նրա բնական վիճակը։ «Բոլոր ռազմական հաշուեմատեաններում նշուած է ռազմական գործին իմ հօր կիսապիտանիութիւնը, իմ

պիտանիությունը, տասներկու տարեկան իմ եղբոր պահեստային պիտանիությունը, մեր բահերի քանակը, մեր շան շոթայի երկարությունն ու հաստությունը՝ քաղաքակրթությունն ահա անորոշութեան մութից դրանք յայտնաբերել ու տուել է հաշուիչ մեքենաների բերանը...»¹¹:

Դիտարկման մէջ ականյայտ է գրողի անթաքոյց բացասական վերաբերմունքն ամէն ինչ համահարթող, մի կաթնալուծ ամէն ինչ «տեղաւորող» քաղաքակրթութեան հանդէպ, որի արդիւնքում ստացուելու է մի նոր «որակ»՝ անհատականութիւնից զրկուած մարդ: Մայթէոսեանի այս անհանգստութիւնը փոխանցուելու էր իր գրականութեան: Դա նրա մէջ կար դեռեւս գրական ճանապարհի սկզբին: Մայթէոսեանի համար շատ կարեւոր էր մի բան՝ մարդը չի կարող «բանաձեւերի» հաւաքածու լինել, նա շատ աւելի հարուստ է, քան փորձում են նրան ներկայացնել եւ կամ խցկել իրականութեան «կարգաւորուած» սահմանների մէջ:

Ահա այս առումով նրա ստեղծագործութեան առաջին շրջանի¹² ակնարկներն ու պատմուածքները, այդ թւում եւ «Մենք Ենք, Մեր Մարերը» (1967) որոշակի օրինաչափութեան են միտում: Պարզ է, որ դրանցից ամէն մէկը միանգամայն տարբեր նպատակ է հետապնդում: Գրողն ամէն անգամ որոշակի խնդիր ունի իրագործելու՝ կենդանի նիւթն իմաստաւորելու, զեղարուեստօրէն վերստեղծելու, յաղթահարելու իմաստով: Բայց դրանք ներքին ընդհանրութեան մէջ են՝ կեանքի քարացած դոյաձեւերի դէմ ներքին ընդվզումի, ըմբոստութեան առումով: Դա արդէն նեղացող, սմբող մի աշխարհ է, որտեղ բաւականաչափ դժուար է ապրելը:

Բանական մտածողութիւնն ականյայտօրէն կարեւոր է մարդկային կեցութեան համար, բայց այն իր չափ ու կշռով անկարող է «ծածկել» ողջ կեանքն իր հարստութեամբ: «Մայթեմատիկան», «Հաշիւը», «Հաշուարկը» որքան էլ փորձեն հանդէս գալ իրեւ կեանքը կարգաւորող ոյժ, կը մնան միայն ցանկութիւնների տիրոյթում: Կեանքը շատ աւելի հարուստ է, քան այն կարող է թուալ առաջին հայեացքից: Պատահական չէ, որ երեւոյթների, մարդկային էութեան մէջ կան այնպիսի որակներ, որոնք ենթակաջ չեն տրամաբանական մեկնաբանութիւնների: Աւելին՝ բանական մօտեցումն աղաւաղում է կեանքը՝ համահարթելով ամէն ինչ, աղճատում է մարդկային ներաշխարհի անկրկնելիութիւնը, երկար ժամանակի մէջ ձեւաւորուած մարդկային որակը: Եւ միայն աշխարհի ու մարդու անհատական սխեմաներից զուրս գրողի վերապրումի միասնութեամբ է լիարժէքօրէն դրսեւորւում կեանքը: Հետեւապէս եւ առաջին հայեացքից նրա հերոսների արարքները յաճախ տրամաբանօրէն «անմեկնաբանելի» են: Նրանք գործում են «ողջախոհութեանը» հակառակ եւ ապրում են իրենց կեանքն ու օրն այնպէս, ինչպէս որ այն կալ: Նրանք երբեք չեն փորձում իրենց էութեան եւ դրա դրսեւորման ձեւերի՝ խօսքի, կեցուածքի, իրենց պատկերացումների միջեւ, միջավայրի ազդեցութեամբ, նկատուող տարանջատումը խորացնել: Աւելին՝ նրանք հակադրուելով ժամանակի կողմից մատուցուող յարաբերութիւնների պարտադրանքին, փորձում են հնարաւորինս պահպանել սեփական անհատականութեան ամբողջականութիւնը՝ դիմակայելով մարդ-

կային էութեան երկատման տեւական ու անշրջելի ընթացքին: Այնքան ժամանակ, քանի դեռ խօսքը վերաբերում է իրենց, նրանք կարողանում են տէր կանգնել սեփական էութեանը, մարդկային որակներին:

Առաւել դժուար է, երբ պարզւում է, որ միանգամայն նոր իրադրութեան մէջ կեանքը եւ դրա մասին եղած պատկերացումները խտրորէն տարբերւում են միմեանցից: Մաթէոսեանի դեռեւս անփորձ գրիչը պարզել է նոր ժամանակի ամենամեծ վրիպումը՝ կեցութեան գուռ բանական իմաստաւորումը ճգնաժամի մէջ է եւ իրականում չի կարող բացայայտել երեւոյթների ողջ էութիւնը: «Խոսպանք պէտք է լինէր՝ տեսնելիմ, է, տեսնելիմ, որ չէ, ստանդարտ չենք»¹³: Դեռեւս առաջին ակնարկում եղած այս եզրայայնողումն ուղղուած էր կեանքի միօրինականացման դէմ: Սա իր գրական ճանապարհի սկիզբն էր, յետագայում արդէն գրողը նորանոր ձեւերով ու խորութեամբ մաքառելու էր կեանքի մեռեալ ձեւերի դէմ եւ հաստատելու էր կենդանի կեանքի գոյութեան իրաւունքը:

«Տափաստանում» ակնարկը առաջին գրաւոր հրապարակումն է եւ բաւականաչափ կարեւոր է գորղի գրական ճանապարհի սկզբի առումով, որտեղ, թէեւ դժուար է գտնել մաթէոսեանական բարձրաթիւ խօսքը, այդուհանգերձ բաւականաչափ լաւ են երեւում գրողի նախասիրութիւնները: Երկու կարեւոր առանձնայատկութիւն կարելի է նկատել այստեղ, ինչը յետագայում իր խորացումը արտայայտութիւնը գտաւ Մաթէոսեանի ստեղծագործութեան մէջ: Առաջինը՝ երեւոյթները առօրէական կապերի մէջ բացայայտելու, փաստերին հււատարիմ մնալու սկզբունքն էր: Երկրորդը՝ առօրէականի մէջ գեղեցիկն ու տեւականը տեսնելու գրողական ջիղն էր, որ ասելիքը դարձնում էր կենդանի, ամբողջական:

Մաթէոսեանը տարբերւում էր մամուլում տպագրուող բազմաթիւ ակնարկագիրներից, որոնց առաջադրած հարցերն ընդհանուր բնոյթ ունէին: Նա խօսում էր իրական մարդկանց մասին՝ իրենց առաւելութիւններով ու թերութիւններով: Համահարթեցման այն ուղեգիծը, որ տարւում էր հասարակական կեանքի բոլոր բնագաւառներում, իր անմիջական արտայայտութիւնն էր գտնում մամուլում ներկայացուող ակնարկներում: Նրա դեռ անփորձ, սակայն հեռահար հայեացքը որսացել էր պահը:

«Այստեղ ամբողջ կոմսոմոլը մեխանիզատոր է...»

Այստեղ բոլոր մեխանիզատորները կոմերիտականներ են...

Այստեղ ամբողջ բրիգադը, աշխատանքային ողջ տեղամասը, ամբողջ սովխոզը կարելի է կոչել՝

-Ընկեր մեխանիզատորներ կամ՝

-Ընկեր կոմերիտականներ»¹⁴:

Համահարթեցման այս հետեւողական քաղաքականութեան մէջ ուղղակիօրէն անտեսւում էր մարդը, էլ չենք խօսում նրա ներաշխարհի հարստութեան, ներքին ապրումների մասին: Պետական ուղեգիծը միտումն է ոչ թէ դէպի մարդը, այլ աւելի «կարեւոր» խնդիրների լուծմանը: Հետեւապէս նրանք միայն միջոց են բարձրագոյն նպատակին հասնելու ճանապարհին: Իսկ թէ ինչպէս են ապրում այդ նոյն մեխանիզատորները, որոնց աշխա-

տանքն այնքան կարեւոր է «վճռական օրերին», ոչ ոքի չի հետաքրքրում: «Չեզ հետաքրքրում են միայն տոկոսները, այսինչ կոմբայնը այսօր այսքան է հնձել՝ առանց իմանալու կոմբայնավարի անունը... Մենք եղաւ կը գնայինք առանց ձեր «թուղթիկ ժողովների» էլ...»¹⁵:

Մաթէոսեանը խօսում է կենդանի մարդկանց մասին, ովքեր տարբեր ճակատագիր ու կենսագրութիւն ունեն, ովքեր աշխատում են իրենց կարողութեան չափ՝ ոմանք անցնալով մոռանալու, ոմանք իրենց ապագան աւելի բարեկեցիկ դարձնելու յստակ նպատակադրմամբ, երրորդները պարզապէս չեն կարող չախատել, քանի որ դա նրանց էութիւնն է, նրանք բարիք ստեղծողներ են: Երկրում ձեւաւորւում է բիւրոկրատական դասը, որ սովորաբար իրեն է վերագրում բոլոր ձեռքբերումները, այս դասի համար աշխատանքային պայմաններն ուրիշ են. «Դեկավարնե՛ր են, ամենքի տակ մի ձի, մի բրիչկա ... Հաշուէք. Վելիկանովին՝ մէկ, բրիգադիր Մարդինովին՝ մէկ, ագրոնոմ Բախտալիարովին՝ երկու - փոխէփոխ է լծում, սուրհանդակ է, հաշուապահին՝ մէկ, ֆերմայի վարիչին՝ մէկ, հաշուապահին՝ մէկ ձի են տուել»¹⁶:

Գլուխ է բարձրացնում անարդարութեան զգացումը. մարդիկ խորթանում են միմեանց: Խորհրդային բիւրոկրատիան օտարւում է հասարակութիւնից: Աշխատաւորն իր հերթին օտարւած է զգում պետութիւնից, քանի որ չեն լսում իր կարծիքը, չեն տեսնում կենդանի մարդուն, որն իր խնդիրներն ունի, եւ դրանք, որքան էլ տարրական, այդուհանդերձ մնում են չլուծուած:

Բայց, շարունակւում է կեանքը, դժուարութիւններին չեն դիմանում շատերը, աշխատանքը տանում են յամառ ու անկտրում կամքի տէր մարդիկ: Նրանց է վերապահուած հիանալ բնութեան գեղեցկութեամբ: Աշխատանքի բերկրանքը վայելում են նրանք, ովքեր դժուարութիւնների բեռը կրողներն են. «Չորսով դեռ աշխատում եւ խմում էինք տափաստանի գեղեցկութիւնը եւ զարմանում նրանց վրայ, ովքեր իրենց շուտ կորցրին»¹⁷:

Բայց նրանք, ովքեր ճարպկութեամբ, հազար ու մի պատճառաբանութեամբ լքեցին աշխատանքի ճակատը, իրենց զրկեցին ոչ միայն ծանր աշխատանքը կատարելու պարտականութիւնից, այլեւ արարման բերկրանքից, կեանքի իրական արժէքն հասկանալուց, ընկերասիրութիւնից, մարդկայնութիւնից: Բայց որքան էլ զարմանալի է, ծանր աշխատանքից խուսափողները տեսանելի ոլորտներում դառնում են «ղեկավարողներ», «կազմակերպողներ». նրանց համար նախապատրաստւում է վաղուայ բարձր հասարակական դիրքը:

Մաթէոսեանի համար այս ամէնը երկրորդական է՝ մարդ-անհատի, մարդկային այն «տեսակի» կողքին, որը երկրի նուիրեալն է: Եւ որ կարեւոր է՝ տափաստանի մշակումը երկկողմանի ընդլիճ ունի. ոչ միայն մարդն է մշակում տափաստանը, այլեւ տափաստանն է իր հերթին մշակում մարդուն: Դրանք կայացման իւրօրինակ ընթացքի մէջ են: Սա Մաթէոսեանի ամենակարեւոր եզրայանգումն էր, որ դուրս էր գալիս ակնարկային փամանակի սահմաններից: Մաթէոսեանը կարեւորում է մարդու կայացման

ընթացքը, հետեւապէս «Տափաստանում» խօսուում է ոչ այնքան հերոսական աշխատանքի, որքան կատարելագործուող մարդկանց մասին: Իսկ սա շատ աւելի կարեւոր խնդիր է, քան հասարակական աշխատանք կատարող կամ դրանից խուսափող, սակայն բարձր դիրք ապահովող մարդկանց մասին պատմութիւնները: Եւ որպէսզի ականարկագիրը մէկ անգամ եւս ընդգծի այս գաղափարի կարեւորութիւնը, որ վերժամանակային բնոյթ ունի եւ դուրս է «Տափաստան»ի ժամանակից, իր խօսքն սկսում է բնութեան նկարագրութեամբ: Այն տարուայ տարբեր եղանակների համադրութիւն է՝ բնութեան զարթօնքի, դրա ծաղկման, հասունացման ընթացքով: Խօսքը տեւականօրէն կրկնուող ժամանակային հոսքի մասին է:

Գարնանը տափաստանը բաց կանաչ գոյն ունի, ծածկուում է նուրբ բուսականութեամբ, որ քամուց անգամ չի խշշում, ապա տարածուում է մեղմ սպիտակութիւն, որ բարակ մշուշի պէս փռուում է դաշտով մէկ, ծաղկում են ցորենը, վարսակը, խոտհարքները: Օգոստոսին գոյները խամրում են, ապա միանգամից տափաստանը ներկւում է ոսկեղեղին, դրա կողքին սիւմինդրի դաշտն է՝ հարեւանութեամբ արեւածաղկի կանոնաւոր բանակի:

Աշնանն ամբարւում է ոսկեհասկը, եօթխոփանիները նորից պատռում են հողի կուրծքը: Աշնան սառչող հողն այլեւս գոլորշի չի շնչում, գոյների խաղն այլեւս չկայ, տափաստանը միայն սեւին է տալիս... Ժամանակի այս յաւերժական երթին նոր բովանդակութիւն ու իմաստ է հաղորդում մարդը՝ տափաստանի նոր բնակիչներով:

Առաջին եկուորները ջահել տղերք են եղել, քաղաքի օդից դեղնած եկել, հանել են քուրքները, շնչել տափաստանի սառը օդը եւ որոշել ապրել հարիւր եւ մէկ տարի «... Ոստանում գերեզմանոց չկար, իսկ մահը կար, հենց այստեղ, իրենց կողքին դարանած մի տեղ էր...»: Եւ դա այնքան անսպասելի էր ու անտեղի, որքան համակ կանաչութեան մէջ յանկարծակի յայտնուած թումբն ու խաչը: Բայց կեանքն աւարտ չունի, շարունակութիւնը նոյնքան անսպասելի է, որքան մահը: Նորածնին չէր կարելի թողնել վագոնիկի մէջ, ուր ցերեկը շոգ է, գիշերը՝ ցուրտ: Տեղամասի մարդիկ կառուցեցին առաջին փայտաշէն բնակարանը դազախ կուրբան վալիեւի չիրիմից քիչ հեռու: Կեանքը մահուան ու ծննդի հերթագայում է: Ամէն մէկի համար ամէն ինչ յարաբերական է, կեանքը բացարձակ է՝ անընդհատ շարժում: Եւ քանի որ մարդն անպաշտպան է մեծ ժամանակի հոսքում, հետեւապէս նրա հանդէպ դրսեւորուող սէրն ու գուրգուրանքը, ուշադրութիւնն առաւել քան կարեւոր հանգամանք են. մարդն իրապէս մեծագոյն արժէք է՝ իր ներաշխարհով, անհատականութեամբ: Հետեւապէս ելակէտն ու նպատակը մարդն է՝ ինչպէս առօրէական, այնպէս էլ վերկենցաղային մղումներով: Ուրեմն «ստանդարտացնել» մարդուն գրականութեան, ականարիկ էջերում, պարզապէս անհերքելի է. «Խոպանը պէտք է լինէր՝ տեսնէիմ, է, տեսնէիմ, որ չէ, ստանդարտ չեմք, քէ չէ՝ Մելսը կոնֆէտ է առնում ընկերուիսու համար, ես էլ եմ առնում, ես քեւ տալիս եմ ընկերուիսու, Մելսն էլ է տալիս: Ստանդարտ»¹⁸:

Գրականութեան մէջ մաթէոսեանական մտքի թռիչքը գերազանցապէս կապուած է մարդկային կենդանի անհատականութիւնը բացայայտելու մղումին: Դա նաեւ զուտ մարդկային իրաւունքի, նրա բնական կենսաձեւի պահանջն էր, որ հակադրուում էր սահմանափակման տարակերպ ձեւերին:

Բնական կենսաձեւի իւրօրինակ արտայայտութիւն է «Քննութեան» պատմութեամբ: Ստեղծագործութեան ներքին տրամաբանութիւնն ուղղուած է հենց «միօրինականացման» ջանքերի դէմ: Կեանքի միօրինականացման հանդէպ նման յատակ պատկերացում ունի պատմութեամբ հերոսը: Մարդկանց թւում է՝ ճշմարտութիւնն ամփոփուած է տարատեսակ հաստատօր գրքերում ու դրանք կրկնելով ու զանազան խոստումներով կարելի է լաւ ուսանող, ի վերջոյ երկրի համար պիտանի քաղաքացի լինել: Իսկ պատմութեամբ հերոսը՝ բնութեան ազատ զաւակը, անյարմար ու նուաստացնող բան է տեսնում քննութեան ողջ ընթացքի մէջ. «Ուղղակի մի շատ վատ բան կայ քննութիւն յանձնելու մէջ...»:

Վատն այն է, որ քննութիւնն իր սխեմատիկ պահանջներով չի կարող հասնել լինել ճշմարտութեանը, այն կազմակերպման ձեւով իսկ ենթադրելի է դարձնում կաղապարուած իմացութեան անհատեղատութիւնը: Այստեղ չի բացայայտուում մարդու անհատականութիւնը:

Իրականութիւնը բոլորովին այլ է: Բոլոր նրանք, ովքեր հեշտութեամբ են ենթարկուում համահարթեցման քաղաքականութեանը, դառնում են ուսանողներ: «Իսկ միջանցքում սպասում էին հերքի: Կային այնպիսիները, որոնք դեռ նոր էին մտնելու՝ ուրախանալու եւ ուրախացնելու իրենց «խոստանում եմ»ներով ու «կապիտալիզմի շոշափուկներով»: Կային եւ այնպիսիները, որոնք արդէն եղել էին ներքեւ, «խոստանում եմ» էին ասել, բայց չէին ասել՝ «ներկայացնում եմ կապիտալիզմի շոշափուկները»²⁰:

Հետաքրքիր է պատմութեամբի մատուցման ձեւը: Գրողն ընտրել է ակադեմիկ-պատմողի այնպիսի տեսանկիւն, որն իր արտաքին յատկանիշներով հերոսին ակնյայտօրէն տարբերում է, պայմանականօրէն ասած, վերացական հեղինակից: Այս հանդամանքը սրում է պատմող-հերոսի՝ դէպքերի մասնակցութեան պատրանքը:

Պատանի հերոսն առողջ, «բնական» մանկութիւն է ունեցել: Նրա դեռեւս նոր ձեւաւորուող ընկալումները պայմանաւորուած են ապրուած կեանքի իրական ազդակներով: Երգիծանքով ասուած խօսքը ներքուստ այլ իմաստ ունի. «Դիրեկտոր Դալքեանը ստորագրելիս միայն ասաց, որ այդ իր ստորագրութեամբ ու կնիքով՝ հինգհարիւրերորդ վկայակաճն է: Իսկ երբ դուրս էի գալիս, չիամբերեց, վեր կացաւ, համբուրեց, դուրս բացեց եւ ասաց, որ հենց այստեղից էլ սկսում է գիտութեան քարքարոտ ճանապարհը իմ առաջ»²¹:

Իհարկէ, կեանքը պատանու համար սկսուել էր ծննդեան օրից, դպրոցի երկար ու ձիգ ճանապարհը՝ որ ոչ դժուար էր, ոչ էլ այնքան հաճելի՝ լցրել էր նրա էութիւնը քերականութեամբ, մանկական չարութիւններով, տատիկ սնդուկի հարստութիւնից բռնելով օգտուելու ներքին հրճուանքով, ի վեր-

ջոյ՝ կեանքով: Բայց տնօրէնի դիտողութիւնն այլ ենթիմաստ ունի՝ պատաս-
նու համար սկսուած է մի այնպիսի ճանապարհ, որ իսկապէս քարքարոտ է:

Մաթէոսեանն ստեղծել է պայմանականութիւնից վեր կանգնած պա-
տանու կերպարը, որ դեռեւս չի ճաշակել իրականութեան դառնութիւննե-
րը: Նա իրապէս չգիտէ, թէ ինչ ճանապարհ է անցնելու: Բնական է, որ սե-
փական տան, դպրոցի, գիւղի, թէկուզ խեղճ, բայց ջերմ ու անկրկնելի, մի-
այն իրենց յատուկ կեցութեան, ոգու անմիջական կրողը վախ չունի դրա-
յի խառնափնթոր, պարզունակ ու չոր կեանքին բախուելու համար: Նրա ներ-
քին ազատութիւնը պայմանաւորուած է սեփական միջավայրի բնական կե-
ցութեան ազատութեամբ, որտեղ չկայ պարտադրանքը, եւ ոչ մէկն էլ ցան-
կալին իրականութիւն չի դարձնում:

Մաթէոսեանի հերոսն առանձին պահերին, զուտ խօսքի, արտայայտու-
թեան առանձին ձեւերի առումով յիշեցնում է Սելինջրի հերոսին՝ Քուլֆիլ-
դին, բայց գաղափարական առումով ուղղակի հակադիր է նրան²²: Եւ որ-
քան էլ թերութիւններ ունենայ գրական այս նախափորձը, ուր ակնյայտ են
հոգեբանական միագիծ հիմնաւորումները, այսուհանդերձ այն ներքին
գրաւիչ ոյժ ունի: Մաթէոսեանի Արտեուշը տրամագծօրէն հակադիր է սե-
լինջրեան հերոսին. եթէ վերջինս դառնութեան, կեղծիքի միջավայրից
փախչում է վերացական աշխարհ, որտեղ կարողանում է ինչ-որ պահի ինքն
իր հետ լինել, ապա մաթէոսեանի հերոսն ունի իր աշխարհը: Նա վախ չունի
անյայտութիւնից. նրա համար ամէն ինչ որոշակի է, ամէն ինչ իր արժէքն
ու տեղն ունի: Նա այդ երեւոյթները վերաիմաստաւորելու անհրաժեշտու-
թիւն չի զգում: Եւ այս ամէնը պայմանաւորուած է նրա՝ համայնքային
կենսաձեւերի միասնականութեան ներքին զգացողու-թեամբ: Սա կարեւոր
հանգամանք է այն առումով, որ յետագայում մաթէոսեանական աշխարհի
կարեւոր, անտրոհելի մասն է դառնում այս տեսանկիւնը: Պատմութեամբ
այս միտումն ակնյայտ է, ճիշտ է՝ երեւոյթների արտաքին ձեւերի մէջ:

«Եկան տղաները եւ ասացին, որ գնում են սովորելու: Խմբովին: Հննց
հիմա»²³: Աշխատանքի բաժանումն ինքն իրեն կատարուեց: Տղաներից մէկը
գիւղսովետ, միւսը բուժկէտ վագեց՝ տեղեկանքներ ձեռք բերելու համար,
նախագահը մեքենայ տրամադրեց՝ տղաներին մինչեւ ինստիտուտ հասցնե-
լու համար, վարորդն այդքան աւույզ ու բանիմաց տղաներից ոչինչ էլ չէր
վերցնելու: Իսկ ճանապարհին, երբ անցնում էին այգիների մօտով, կանգ-
նեցրեց մեքենան՝ նստարանների տակ լիքը ծիրան լցրեցին, որ վաշիւն
բնութեան բարիքը, իսկ այգու պահակը ձեռքի կոպայը շարտեց միայն այն
ժամանակ, երբ տղաներն արդէն խմբով թռել էին ցանկապատի վրայից:

Ընդունող յանձնաժողովի նախագահն ասաց, որ երաշխաւորագիր-լիա-
զօրագրերը պէտք է առանձինն լինէին, իսկ գիւղսովետում մէկն էին
տուել, առանձին զրելու անհրաժեշտութիւն չէին զգացել: Բայց աւանդա-
կան կենսաձեւը տեղը գիջելու է նորին, կամ էլ գործելու է սեփական միջա-
վայրում: Նոր միջավայրում մարդկանց թուում է, թէ փաստերի մեխանիկա-
կան իւրացմամբ հնարաւոր է տարբերել ճիշտը սխալից, խմացողին՝ չիմա-

ցողից, յիմարին՝ խելօքից, լաւին՝ վատից: Առաջմ, թէ եւ ոչ-խորութեամբ, միմեանց են հակադրուում կենդանի կեանքը ու դրա մեռեալ ձեւերը:

Քննութիւնն ստանդարտ նախադասութիւններ արտասանելու պահանջ է դնում, իսկ պատանու համար կարեւորը պատասխանի իմաստն է եւ ոչ փաստերի անիմաստ կուտակումը: Իսկ դրսում կեանքն էր՝ իր բնական, ազատ ընթացքով: Տղաներն արդէն գործի էին գցել մեքենան... Այնպէս որ, երբ ճիշդ օրուայ երեկոյեան տղան տանը պատմում էր տպաւորութիւններից, առաջինը խոտհաւաքից պատմեց, հիացմունքն արտայայտեց նախագահից, շօֆէրից, ընկերներից, ծիրանի գողութիւնից, պահակի համար թէյի գալէթ բերելու պատմութիւնից, լեռնանցքի ռետտորանում քէֆից: Այս ամէնը էէր հետաքրքրում մօրը, աւելին՝ նա լաց եղաւ, որ տղան հօրն է քաշել եւ ուրախանում է պարապ բաներով, իսկ «հիմնականը չի տեսնում»:

Իրականում տղան տեսնում է կեանքը՝ իր անյաւակնոտ ու բնական ընթացքի մէջ, նրան չեն գրաւում հազար ու մի պայմանականութիւնները, որ նեղացնում, փչացնում են մարդու օրը: Ձէ՞ որ հիմնականը տեսնել նշանակում է վայելել գեղեցկութիւնը, աշխատել յոգնելու չափ, գնահատել դիմացինի լաւութիւնը, զգալ նրա կարեկցանքը եւ սեփական վերաբերմունքով փոխհատուցել այն, կարճ՝ ապրել լիարժէք կեանքով:

«Իսկ հայրս.

- Գնալիս ծիրան գողացա՞ք: Վերադարձին գալէ՞ք բերիք պահակի հասար: Հարցերը գիտէիք, քայց չուզեցի՞ր ուսանող դառնալ: Դարչինով թէյը շատ լաւն է: Եւ ընդհանրապէս մայրիկդ շատ լաւ թէյ է պատրաստում: Դէսը տուր մուրաբան...»²⁴:

Պատմութեան աւարտը կեանքի կենսական ձեւերի փառաբանումն է: Առօրէականի հմայքը հերոսի համար ամէնից կարեւորն է. այն չի կարելի փոխարինել կեցութեան սիւնատարիկ ձեւերով եւ ապրել ինքնախաբէութեամբ: Հետեւապէս հօր ընկալմամբ որդու մեկնաբանութիւնը միանգամայն ճիշտ է ու տեղին: Եթէ մարդու գոյրնթացը պարտադրուած չափանիշներով առաջ չի գնում, ուրեմն ամէն ինչ ճիշտ է: Ձէ՞ որ ինքն ըմբոշանում է կնոջ պատրաստած հրաշալի մուրաբան եւ հարկադրուած չէ ուտելու այն, ինչ իրեն դուր չի գալիս: Հետեւապէս գոհանալ է պէտք եղածով ու նաեւ գոհանալ այն ամէնով, ինչի տէրն ես այսօր:

Պատմութեամբում ի յայտ է եկել երեւոյթների մատուցման մէկ այլ սկզբունք՝ «չասելով ասել այն, ինչ կարեւոր է»: Դա կեանքի տեսանկյնի ձեւերի ու դրա էութեան հակադրութիւնն է, ինչն արտայայտուած է տղայի հօր եւ մօր հետ ունեցած զրոյցում: Այնքան հանդարտ ու հիմնաւոր են տղայի հօր առօրէական թուացող խօսքն ու զրոյցը, որ աւելորդ է դառնում մնացած «կարեւոր բաների» մասին խօսելը, մարդիկ (տուեալ դէպքում մայրը) կեանք են դարձնում այն, ինչ չարժէ դարձնել: Ամէնից արժէքաւոր կեանքի, մարդկայնութեան հմայքն ապրելն է, այդ ամէնն զգալը:

Ապրելու միօրինակ, կրկնուող ձեւերի դէմ է ուղղուած եւ «Լեռներս Թողեցի Վերելում» պատմութեամբը²⁵, որ Օգոստոս Ժողովածուի մէջ տպագրուել է «Շները» վերնագրով: Պատմութեան հերոսի մտորումների ու վե-

րապրումի մէջ խնդիրն առաւել ակնյայտ բնոյթ ունի. կեանքի կենդանի
ձեւերը հակադրուում են մաթեմատիկային, հաշուարկին, ստանդարտին:
Հերոսի մէջ տեղի ունեցած փոփոխութիւնը կապուում է այն մեթոդների
հետ, որոնք ձեւաւորում են «նորմալ», «կարգին» մարդկանց: Բնութիւնը,
կեանքը «տեղակայում» է թուերի աշխարհի մէջ, այն կորցնում է իր նա-
խաստեղծ հարստութիւնն ու հմայքը:

Այստեղ հերոսը եւս պատանի է եւ հանդէս է գալիս որպէս դէպքերի
մասնակից: Հակադրութիւնը կեանքի կենսական ձեւերի եւ պարտադրուող
սխեմաների միջեւ սրուող բախումն է, որ անսպասելի լուծում է ստանում:
Եթէ նախորդ պատմութեամբում խիստ որոշակի են տարածութիւնն ու ժա-
մանակը - դա գիւղական միջավայրն է, քննասենեակը, եւ ժամանակն էլ
խիստ որոշակի է՝ վեց օր - ապա այստեղ յստակօրէն հակադրելով տարա-
ծական՝ առանձին միջավայր ներկայացնող երեւոյթները, դրողը խօսքն
առնչում է առաւել ընդհանուր ժամանակին:

Ակնյայտ է, որ Մաթէոսեանը փնտրում է արտայայտման նորանոր ձե-
ւեր՝ խօսքը բնական ու ասելիքն ամբողջական դարձնելու համար: Պարզ է՝
պատմող-հերոսին դնելով տարիքային սահմանների մէջ, նրան պահելով
երեւոյթների ընկալման որոշակի շրջագծում, դրանով իսկ ստեղծում է
յստակ սահմանափակ տարածք բացառելով հեղինակային յղացումների եւ
հերոսի նոյնութեան խնդիրը: Մաթէոսեանը հետեւողական է այն առումով,
որ պատանի հերոսն ասում, խօսում, վերապրում է այն, ինչը ինք կարող էր
իրականում իմանալ: Հեղինակային մօտեցումը թերեւս աւելի որոշակի է
դարձուած պատմութեամբում ներկայացուող դէպքերի եւ ընթերցողի միջեւ
եղած «տարածութեան մէջ»: Հեղինակային դիրքորոշումը դառնում է
յստակ ու նաեւ կանխատեսելի: Եթէ նախորդ հերոսի ապրումներն ամբող-
ջական են, եւ նա չի կարող սեփական միջավայրը լքել՝ այնտեղ ձեւաւոր-
ուած բարոյական կարգերը ոտնատակ տալու ճանապարհով, արեւի տակ
իր տեղը, գուցէ եւ ապահով տեղն ունենալ, ապա այստեղ հերոսի հոգեբա-
նական զարգացումը նրան դարձնում է այլ մարդ: Մաթէոսեանն այս հան-
գամանքը հոգեբանօրէն չի հիմնաւորել եւ ըստ երեւոյթին դրա նպատակը
չի էլ ունեցել: Նրան անհանգստացրել է կեանքի կենսական եւ միօրինակ,
քարացած ձեւերի հակադրութիւնը: Այս առումով խնդիրը լիովին լուծ-
ուած է: Մանկավարժական ուսումնարան է մտնում խուրջինն ուսին, փա-
փախով հովիւր՝ որդու հետ: Հայրը համոզուած է, որ որդուն ժամանակին է
բերել այստեղ, մինչդեռ պատասխանը՝ հեզմանքով ու բանիմաց, ուրիշ բան
է ասում՝ «ուշացել էք»: Յետոյ հարթուում է հակասութիւնը ու թւում է՝
դժուարութիւնները ետեւում են մնացել: Բայց պարզում է, որ ամէն ինչ
նոր է սկսւում: Սարերի լայնարձակութիւնը, մարդկանց ձայները, շների
գայլին հետապնդող կաղկանձն ու հաչը թողած՝ ուսումնարան է մտել երե-
խան: Նրան հենց սկզբից գայրացնում է գիրեկտորի՝ «աշխարհը բացատ-
րելուց յոգնած փիլիսոփայ»ի վերաբերմունքը՝ «հասարակ բանքը չհաս-
կացող» մարդկանց հանդէպ: Այս ամէնը դառնում էլ աւելի դժուար, երբ
խօսքն առանձնապէս վերաբերում է մաթեմատիկային: Դա մի գիտութիւն

է, որ ամէն ինչ դնում է սահմանների մէջ: Եւ մաթեմատիկայի ուսուցչի այն դիտողութիւնը, թէ՛ Հովիւեան, դժուար կը լինի քեզ համար ապրելը, հետեւում է պատասխանը. «Ապրելը - դեռ չգիտեմ, բայց դժուար է ինձ համար հանրահաշիւ սովորելը»²⁶: Նրա համար դժուար չէր ապրելը, որ նման էր հեքիաթի, որին ժամանակաւորապէս հաղորդակից է դառնում եւ մաթեմատիկայի ուսուցչի: Յորդում էր պատմութիւնը՝ սարերի ու սարերի մարդկանց մասին: Զգում էին սարերը՝ իրենց լայնարձակութեամբ ու ոչ մի բանի մէջ չտեղաւորուող, անկրկնելի գեղեցկութեամբ: Դիրեկտորը նրան ետ բերեց սարերից. «Լուծիր»՝ ասաց: Նրա կարծիքով կեանքը առաջադրանքներ եւ դրանց ճիշտ լուծումն է²⁷:

Մաթեմատիկայի ուսուցիչը եւս ժամանակին սարերում ապրել է մանկութիւնից պատանեկութիւն գնացող կեանքը. նրան հասանելի են տղայի հոգում խլրտացող ապրումները: Նա եւս համոզուած է, որ սարերը խնդիրներ լուծելու անհրաժեշտութիւն չունեն. «Նրանք հենց նրա համար են, որ ծեծուեն կարկուտից, նորից կանաչեն, չմտածելով էլ, որ այդ կանաչը նորից է ջարդուելու կարկուտից»²⁸:

Սա նրբին դիտարկում է: Իհարկէ, տուեալ պարագայում խօսքը վերաբերւում է մաթեմատիկան չսիրող, սարերում, բնական միջավայրում մեծացած, հասակ առած հերոսին, ինչպէս եւ նրանց, ովքեր սարերում են ապրում: Այստեղ կեանքը կանոնակարգուած չէ խնդիրներով ու դրանք լուծելու անհրաժեշտութեամբ: Սարերը չեն կարող չկանաչել, քանի որ դա նրանց էութիւնն է, կարկուտը թէ՛ ջարդեց, նորից են կանաչելու, եւ դա որովհետեւ այդպէս լաւ է ու գեղեցիկ, այլ որովհետեւ կանաչելը սարերի էութիւնն է, նրանց կենսաձեւը: Բայց պարզում է, որ սարերում եւս մարդիկ կարող են միջամտել եւ իրենց ցանկութեամբ ուղղել բնութեան «սխալները»: Փարախում հովիւներըր ձեւ էին տալիս Ներու պոզերին. Ներին յարմար էր գտել իր պոզերն անցնել այնպէս, ինչպէս նախնիներն են ունեցել՝ ականջի շուրջը չըջան տուած: Հովիւները դա տգեղ էին համարում. թոյրից հանած տաք լաւաշով փաթաթում էին պոզերը եւ ուղղում:

«- Չեր ի՞նչ գործն է, ոնց ուզում է՝ թող աճի, - ասացի ես:

- Հօ իր ուզելովը չէ»²⁹:

Իսկ երեկոյեան, երբ հոտն ուրթ էր իջնում, Ներին կանգնած բլրի գագաթին, սպասում էր՝ լուսինը նստի պոզերին, իսկ երբ լուսինն այնուամենայնիւ մտածում էր պոզերից էլ վեր բարձրանալ եւ ցոյց տալ լեռնաբանների կեղծութիւնը, Ներին պոկեց պոզերը նրանից եւ քորեց պոչը:

Ինչպէս Ներու նորացուած պոզերն «ուղղուեցին» դժուարութեամբ, այնպէս էլ տղան:

Մաթէոսեանը դէմ է այն ամէնին, ինչը չի բխում երեւոյթի էութիւնից: Հակառակ պարագայում անխուսափելի է ձեւի եւ բովանդակութեան տարանջատումը, մարդկային հոգու երկփեղկումը: Այդպէս ողջ կեանքում էութեամբ սարերում, իսկ իրականում մաթեմատիկայի խնդիրներով ծանրաբեռ ապրեց ուսուցիչը, չունեցաւ լիարուեստ ապրելու վայելքը, նեղացրեց կեանքի նպատակը, հետեւապէս գործադրուող ջանքերն անգամ նրան ան-

տեղի են թոււմ. «Մի դէպքում շնորհի հետ վագում ես գայլի ետեւից, այդպէս ես յոգնում շատ շուտ, միւս դէպքում էլ քեզ քաշում եմ խոհանոց կարտոֆիլ մաքրելու, կարծես անելիք ունես, պիտի անես, բայց դա ի՞նչ գործ է, արժէ՞ր դրա համար ծնունել»³⁰։ Նոյնը կատարւում է պատմութեան հերոսի հետ։ Նա յաղթահարում է իր մէջ սարերի հանդէպ ունեցած սէրը եւ ամբողջութեամբ թաղւում հանրահաշուի մէջ։ Այնքան հիմնաւոր էր օտարութիւնը, որ ամսուայ վերջում, երբ ուսուցիչը նորից ուզեց լսել Ներու մասին, աշակերտը պարզապէս կասկածեց ուսուցչի ողջամտութեան վրայ։

Պատանին այլեւս «վերադաստիարակուածի» օրինակ էր։ Դիրեկտորը պարզապէս հիացած էր երբեմնի ծոյլի առաջնութեամբ, նրա մէջ այլեւս չէր խլրտում երբեմնի կռուարար, յիշաշար ոգին, նա չի էլ զարթնելու։ «Իսկ այդպէս հեզ շատ լաւ էր»։ Ուսուցչին ուղարկեցին թոշակի, տղան նրան բազմիցս պատմել էր իրենց սարերի ու Ներու մասին, ուսուցիչն այլեւս ձանձրանում էր, նրան ուրիշ պատմութիւն էր պէտք, իսկ ուրիշ ոչինչ չկար, «ուրիշն արդէն հանրահաշիւն էր»։ Կենդանի, զրնգուն կեանքը փոխարինուել էր մաթեմատիկայով։ Արդէն օրերի լրումին հասած մանկավարժի համար, երբ այլեւս մէկընդմիշտ ու վերջնականօրէն պարզ էր, որ կեանքը շատ աւելի հարուստ էր ու բովանդակայից, քան մաթեմատիկան, որն այդ համընդհանուր հոսքի մէջ իրականում շատ քիչ բան է փոխում, շատ կարեւոր էր իր վերադաստիարակուած աշակերտին դէպի ակունքները դարձնելը, բայց արդէն ուշ էր. դրա համար ոչ ինքը եւ ոչ էլ աշակերտն այլեւս ժամանակ չունէին. «Մայրդ, որ ծերանայ ու նրա համար մէկ լինի՝ դասատու՞ կը լինես, թէ հոսիս, վեր կաց ու գնա սարերը, շները գայլի ետեւից գցիր ու վագիր... վագիր... այնքան վագիր...»։

Պատմութեան Օգոստոսի մէջ ներկայացուած տարբերակում առանձին շտկումներից բացի կարեւոր եզրայանգում ունի.

«Սարից իջածներին ես հարցնում էի.

- Բոքը ո՞նց էր:

- Բո՞քը, - ծիծաղում էին նրանք: Բոքը լաւ էր, ասում էր եղբայրներիդ համար կօշիկ ուղարկիր երեսուներեքից մինչեւ քառասունմէկ համարի, կօշիկ եմ ուզու՞մ:

Ու Բոքը փոքրանում, մտնում էր կօշիկի մէջ»³¹։

Առաջին հայեացքից է միայն նրկայացուող երկխոսութիւնը դառնում ընկերային հարցերի արծարծման միջոց։ Ենթիմաստից դուրս ընթերցողն այդ տպաւորութիւնն էլ ստանում է։ Իրականում այլ է ասելիքը։ Կեանքի ամենասովորական երեւոյթներն անգամ սուզուած են թուերի աշխարհի մէջ, աւելին՝ համարակալուած է ամէն մէկի կօշիկը։ Ժամանակի պարտադրանքով կեանքը սմբում, արժէգրկում, կաղապարում է՝ ինչպէս Բոքը, որ «փոքրանում, մտնում կօշիկի մէջ»։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ի՞նչ կարելի է ասել Մաթէոսեանի գրական այս փորձերի մասին։ Իհարկէ, դրանք չէին կարող ունենալ գեղարուեստական այն ընդհանրացու-

ծուծիւնը, ինչը բնորոշ է Մաթէոսեանի ստեղծագործութեանն ընդհանրապէս: Եւ ճիշտ էնն այն բնորոշումները, թէ դրանք տաղանդաւոր գործեր են: Գրողին իրապէս գրաւում են առօրէական, սովորական դէպքերն ու դէմքերը, որոնց մէջ ասեկիք գտնելը բաւականաչափ դժուարին գործ է, թէ՛ եւ դրանք հետաքրքիր են հենց ասեկիքի իմաստով:

Հենց սկզբից Մաթէոսեանն ընտրել է դիմադրութեան ճանապարհը, նրա սկսած «կոիւր» գրականութեան մէջ վերաճելու էր համընդհանուր «պատեւրագի», եւ դա գուտ այն պատճառով, որ հորիզոններ ընդգրկող նրա հայեացքը ներառում էր «ամէն ինչ»՝ ներքին հակասութիւններով, վերելքներով ու վայելքներով: Մաթէոսեանի պայքարն ուղղուած էր առողջ ու բնական կեանքի իրաւունքների պահպանմանը, որ յարձակման էր ենթարկուում նոր ժամանակի կողմից:

Իհարկէ՝ անհրաժեշտ է առաջընթացը, բայց չափից աւելի մեծ է ձեռք բերածի գինը, երբ խաչի է հանուում մարդու սէրը, խիղճը, մարդկային հոգու քերմութիւնը, նրա անհատականութիւնը, իսկ այս ամէնից բացի մնում է մաթեմատիկան՝ հաշուարկը, հաշիւը, որ հասարակական կեանքի, մարդու ճակատագրի մէջ փորձում է ոչ թէ երկրորդական, այլ գլխաւոր դեր ստանձնել եւ ի վերջոյ իրենով պայմանաւորել ամէն ինչ:

Այս պարագայում գրողի հարցադրումները կապուած են ոչ այնքան համարձակութեան, որքան նրա դիտողականութեան: Սա վկայում է, որ հեղինակն իրապէս լուրջ մտադրութիւններով էր մտնում գրականութիւն:

Ակնյայտ է, որ այս խնդիրը բաւականաչափ անհանգստացրել է գրողին. «Մաղրածուների Մեր Տոհմը» պատմուածքը կարելի է նախորդ գրական փորձերի ընդհանրացումը համարել: Կատարման առումով այն գեղարուեստական նոր մակարդակ է: Յաղթահարուած է երեւոյթների միադժուրութիւնը, կեանքի կենսական լիցքերով հարուստ պատկերները միտում են ընդհանրացումներ: Ժիշտ է՛ր լինի եզրակացնել, թէ պատմութիւն միակ արժանիքը կենդանի կեանքի եւ կեղծ լրջութեան հակադրութիւնն է: Խիստ կարեւոր է եւ երեւոյթների արտայայտման մեթոդի հարցը: Այն այստեղ թէ՛ եւ ոչ-համապարփակ, բայց հետեւողականօրէն կիրառուող միջոց է՝ բազմաձեւ իրականութիւնը որոշակի տեսանկիւնով ներկայացնելու առումով: Իսկ դա, այս յօդուածի ծրագրային սահմաններից դուրս է:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Հրանտ Մաթոսեան, *Ես Ես Եմ. Հարցադրույքներ*, “Ոսկան Երեւանցի” Հրատ., Երեւան, 2006, էջ 208:

² Մաթէոսեան, *Ես*, էջ 208:

³ Մաթէոսեան, *Ես*, էջ 163:

⁴ Հրանտ Մաթէոսեան, *Սպիտակ Թղթի Առջեւ*, Հայագիտակ, Երեւան, 2004, էջ 59:

⁵ Հրանտ Մաթէոսեան, *Երկեր, Երկու Հատորով*, Հտր-1, Սովետական Գրող Հրատ., Երեւան, 1985, էջ 5:

⁶ Մաթէոսեան, *Ես*, էջ 250:

⁷ Bakhtinologya, Սանկտ Պետերբուրգ, Ախտէնա, 1995, էջ 101:

⁸ Մաթէոսեան, *Ես*, էջ 387:

⁹ Հրանտ Մաթևոսյան, «Այսպէս Կոչուած Գիւղագրութեան Մասին», *Գրական Թերթ*, 12 Սեպտեմբեր 1968:

¹⁰ Մաթևոսյան, *Սպիտակ*, էջ 36:

¹¹ Մաթևոսյան, *Սպիտակ*, էջ 41:

¹² Ընդհանուր առմամբ Մաթևոսյանի ստեղծագործութիւնները կարելի է բաժանել երեք շրջանի՝ 1960ականներ՝ *Անիմոր-Օգոստոս-Աշնան Արեւ*, 1970ականների՝ *Մեր Վազքը-Մառքը*, 1980ականների՝ *Տաշքենդ-Տէրը*:

¹³ Հրանտ Մաթևոսյան, «Տափաստանում», *Սովետական Գրականութիւն*, Յուլիս 1969, Հտր. 7, էջ 32-42:

¹⁴ Մաթևոսյան, «Տափաստանում», էջ 34:

¹⁵ Մաթևոսյան, «Տափաստանում», էջ 35:

¹⁶ Մաթևոսյան, «Տափաստանում», էջ 35:

¹⁷ Մաթևոսյան, «Տափաստանում», էջ 41:

¹⁸ Մաթևոսյան, «Տափաստանում», էջ 42:

¹⁹ Հրանտ Մաթևոսյան, «Քննութեան», *Սովետական Գրականութիւն*, Փետրուար 1960, Հտր. 2, էջ 42-49:

²⁰ Մաթևոսյան, «Քննութեան», էջ 48:

²¹ Մաթևոսյան, «Քննութեան», էջ 42:

²² *Խօսքը վերաբերում է ամերիկացի գրող Սեյմըրի Պատեր Անդուեդի Եզրին վիպակին*:

²³ Մաթևոսյան, «Քննութեան», էջ 43:

²⁴ Մաթևոսյան, «Քննութեան», էջ 49:

²⁵ Հրանտ Մաթևոսյան, «Լեռներս Թողեցի Վերնում», *Սովետական Գրականութիւն*, Օգոստոս 1962, Հտր. 8, էջ 70-74:

²⁶ Մաթևոսյան, «Լեռներս», էջ 71:

²⁷ Մաթևոսյան, «Լեռներս», էջ 72:

²⁸ Մաթևոսյան, «Լեռներս», էջ 72:

²⁹ Մաթևոսյան, «Լեռներս», էջ 72:

³⁰ Մաթևոսյան, «Լեռներս», էջ 74:

³¹ Հրանտ Մաթևոսյան, *Օգոստոս, Հայաստան Հրատ*, Երեւան, 1967, էջ 144:

A SHORT ANALYSIS OF HRANT MATEVOSIAN'S EARLY LITERARY WRITINGS (Summary)

VACHAGAN GRIGORIAN

The renowned Armenian prose writer Hrant Matevosian's first step in literature was his essay, "Ahnitsor", which caused a lot of reaction. Matevosian himself did not consider the short stories he wrote prior to this essay important. These however, constitute an indivisible part of his literary creation.

Grigorian notes that these early writings showed the richness of the inner world of the individual which neither can be limited nor constrained in the framework of a rationalist mindset. Furthermore, he argues that this and other concepts prevailing in these early writings were further developed in his later stories, novelettes and interviews. Grigorian notes that the dilemma the characters faced between the natural/rural and the urban mindsets were extensively reflected throughout the literary career of Matevosian.